

ւորումը, շեշտելով անոր ինքնագիտակցութեան կարողութիւնը: Մարդ իր բնութեամբ ատակ ու կախեալ է մշակոյթէն, ինչպէս նաեւ կը յատկանշուի զգայականութեամբ եւ հոգեկանութեամբ:

Պլեյսէր, փիլիսոփայական մարդաբանութեան կողքին, նաեւ իր վաստակը ունի ընկերաբանութեան մարզէն ներս:

➤ **Ա. ԳԵԼԷՆ** (Arnold Gehlen, 1904 – 1976 թ.),

ընկերաբան-փիլիսոփան, իրեն համախոհ Հ. Պլեյսէրի նման, բաղդատականը կ'ընէ անասուն կենդանիին եւ մարդուն: Ան կը նկարագրէ մարդը, որպէս թերի ու կարիքաւոր էակ, որ պէտք է նախ իր շրջապատին յարմարի: Սակայն մարդը, շնորհիւ իր գիտակցութեան եւ այլ կարողութիւններուն կրնայ իր կեանքը կերտել ու դասաւորել, ինչպէս մտածումներով, խօսքով ու մշակոյթով:

Գելէն, եղած է նաեւ ծայրայեղ բարոյաքննադատ մը, իր «*Բարոյականութիւն եւ գեր-բարոյականութիւն*» (գերմ. բնագիր՝ „Moral und Hypermoral“, 1969 թ.) երկին մէջ ան նոյնիսկ կը զգուշացնէ գերակշռող բարոյականութենէն:

Այս մասին, տե՛ս նաեւ՝ «*Բարոյականութեան քննադատութիւնը*» Մաս – 6, էջ 231 եւ «*Ծայրայեղ բարոյաքննադատութիւն*» յատուկ բաժինը՝ էջ 236:

3. ԳԻՏՈՒԹԵԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

Գիտութեան փիլիսոփայութիւնը (Philosophy of Science) կը զբաղի՝ գիտութեան նախապայմաններով, ոճով, աշխատանքի եղանակով, զարգացումով, նպատակով, ինչպէս նաեւ անոր ստուգումի կարելիութիւններով եւ բարոյագիտութեան հետ ունեցած յարաբերութեամբ:

Փիլիսոփայութեան այս կարեւոր ուղղութեան հիմքը կը կազմէ՝ Տրամաբանական դրապաշտութիւնը (Logical Positivism) կամ Նոր-դրապաշտութիւնը⁽⁴¹⁾ (Neo-positivism), որոնք պիտի մանրամասնուին հետագային: Այստեղ իմացաբանութիւնը կ'ընդունուի, երբ կ'արդարանայ տրամաբանութեամբ եւ գործնական փորձով. այս պատճառով ալ Նոր-դրապաշտութիւնը կարելի է կոչել նաեւ՝ «*Տրամաբանական փորձապաշտութիւն*» (Logical Empiricism): Փիլիսոփայութեան այս ուղղութիւնը կը մերժէ բնագանցութիւնը (Metaphysics), քանի որ ան չ'ենթարկուիր իմացաբանութեան վերոյիշեալ կանոններուն: Այս ուղղութեան համաձայն, փիլիսոփայութիւնը չի մրցիր գիտութեան հետ, այլ կախեալ է անկէ. այս պատճառով ալ հետեւորդները առաջին հերթին բնա-

(41) **Տրամաբանական դրապաշտութիւն** (Logical Positivism) կամ **Նոր-դրապաշտութիւն** (Neo-Positivism) փիլիսոփայական ուղղութեան մասին տե՛ս Մաս – 2, էջ 116, «Վերլուծական փիլիսոփայութիւն» բաժինը: